ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱՊԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԵՏ

Մի ազգ մի ուրիշ ազգի հետ շփվում ու կապվում է իր քաղաքական խնդիրներով կամ կուլտուրական փոխազդեցություններով։

Նոր հայությունը քաղաքական կյանք չի ունեցել և իբրև մի քաղաքական մարմին չէր կարող հարաբերություն ունենալ մի որևէ պետության հետ։ Հայկական հարցն էլ, այն օրվանից, որ առաջ է եկել, երբեք չի եղել հայ ժողովրդի՝ իր ձեռքին, այլ միշտ եղել է այս կամ այն մեծ պետության ձեռքին։ Եվ հայկական հարցի մի ձեռքից մյուսը անցնելու հետ էլ հայ ժողովուրդը տարուբերվել է այս կամ այն պետության օրիենտացիայի միջև։

Այս տարուբերումների ժամանակ նա հաճախ է ընկել ակնհայտնի սխալների մեջ, մոլոր ճանապարհների վրա և ունեցել է մեծ հիասթափումներ ու ծանր կորուստներ։

Հայկական հարցը երբ կապված էր Ռուսաստանի հետ, այն ժամանակվա Ռուսաստանի հակառակորդ Անգլիան, Ռուսաստանի դեմ գնալով՝ դեմ գնաց և հայկական հարցին, ու ստեղծվեց 1877—78 թվականների պատմությունը։

Նրանից հետո, Բեռլինի դաշնագրությունով հայկական հարցն ընկավ եվրոպական մեծ պետությունների ձեռքը, բայց իրոք Անգլիայի ձեռքը, և ահա այժմ էլ ընկանք Ռուսաստանի աչքից, և 1880-ական թվականներից սկսած փչացան հայ ժողովրդի և ռուս կառավարության հարաբերությունները, և շատ աղետալի հետևանքներ ունեցան մեզ համար։ 1912 թվականից նորից անցավ Ռուսաստանի ձեռքը, առաջ բերեց նոր խլտումներ ու նոր դառնություններ։ Եվ այդ ամենի ծանր հետևանքները կրեցինք ներկա մեծ պատերազմի ընթացքում։

Եվ այսպես, հենց այն գլխից միշտ եղել ենք *сквозняк*-ների մեջ Հայկական հարցը ժամանակավորապես ընկել է սրա կամ նրա ձեռքը, հայկական հարցի հետ էլ մեր մեղն է թեքվել այս կամ այն կողմը, ու ամեն մեկի հետ էլ ժամանակավորապես բարեկամանալով, բոլորից էլ կտրվել ենք մշտապես ու շատերի հետ էլ թշնամացել։

Եվ ինչպես ժողովրդական առածն է ասում՝ «Խորոված՝ չկերանք՝ ծուխից քոռացանք»։

Բայց մենք ունեցել ենք մի ուրիշ կյանք, որի տերն ու տնօրենն եթե ոչ ամբողջովին, գոնե մեծ չափով մենք ենք եղել։ Դա մեր կուլտուրական կյանքն է, մեր գրականությունն է, մեր դպրոցն ու մեր մամուլն է, թեկուզև համեստ, բայց մերը։

Ահա այս կողմից է, որ մենք ազատ ու հաստատուն թանկագին կապեր ունենք մի քանի ազգերի հետ, որոնց մեջ Ռուսաստանն ու Գերմանիան շատ մեծ տեղ ունեն։

Առայժմ խոսքս Գերմանիայի մասին է։ Ինչպես մի ժամանակ հայերը, թեև ենթարկված էին Պարսկաստանի ազդեցությանը, բայց բարձր կուլտուրայի համար դիմում էին հին Հունաստան, այնպես էլ նոր հայությունը, թեև Ռուսաստանի սահմաններում ու նրա կուլտուրայի ենթակա, բայց բարձր զարգացման համար միշտ դիմել է Գերմանիա։

Եվ սկսած Խաչատուր Աբովյանից ու Ս. Նազարյանից, մեր նշանավոր գրողներից, հրապարակախոսներից և մանավանդ մանկավարժներից մեծագույն մասը ստացել են գերմանական բարձրագույն կրթություն և հանդիսանում են Գերմանիայի հոգեզավակները։

Սա էլ մի ուրիշ բարձր տեսակի աշխարհակալություն է, որ անում են մեծ կուլտուրական ժողովուրդները, և անում են ոչ թե իրանց դրեդնոուտներով, թնդանոթներով ու ցեպպելիններով, որոնք կարող են փչանալ, ծովում խորտակվել կամ երկնքից ցած ընկնել, այլ իրանց մեծ բանաստեղծներով, մեծ գիտնականներով ու մեծ գեղարվեստագետներով, որոնք, միշտ հզոր ու սիրելի, տիրում են ժողովուրդների մտքերին ու սրտերին և թանկագին ու հարազատ կապերով կապում են իրանց հայրենքի հետ։

Եվ ահա Գերմանիան, որ այսքան անսպասելի հայտնվել է մեր երկրում, հայ ժողովրդի մեջ իրան հարազատ ու թանկագին շատ բան է գտնելու և հոգեկան ու բարոյական շատ ամուր կապ է տեսնելու։

Մի կապ, որ հազար անգամ ավելի նվիրական է, քան ամեն քաղաքական դաշնադրություն։

Ինչ խոսք, որ այս բարձր կապով լուսավոր Գերմանիայի հետ կապված հայ ժողովուրդը միշտ կմնա նրան երախտապարտ ու բարեկամ։ Սակայն մյուս կողմից էլ բնական ու վայելուչ է, որ Գերմանիան այս թոհ ու բոհի մեջ հովանավորի իր լուսավորության ավազանում մկրտված ժողովրդին, իրան հետ այսքան բարձր կապով կապված ժողովրդին, և դա լինելու է ոչ միայն ըստ ամենայնի օգտակար, այլև միաժամանակ վերին աստիճանի մի գեղեցիկ գործ այս խելագար վերուվարումների մեջ։